ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտություն/ուղղություն Օտար լեզու և գրականություն (ռուսաց լեզու և գրականություն)

Որակավորումը Մանկավարժության բակալավր

Ֆակուլտետ Հումանիտար գիտությունների

Ուսուցման ձև - առկա 4-րդ կուրս, 8-րդ կիս., 4 կրեդիտ

Հեռակա 5-րդ կուրս, 9-րդ և 10-րդ կիսամյակներ, 4 կրեդիտ

Հաստատված է ամբիոնի նիստում

(արձ. թիվ 11, 27. 12.2023)

Ամբիոնի վարիչ՝ Թ. Թադևոսյան

Հաստատված է հումանիտար գիտությունների ֆակուլտետի

գիտական խորհրդի նիստում

(արձ. թիվ 11, 01.02.2024 թ.)

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան՝ Մ. Բրուտյան

, Կազմողներ՝ բ.գ.թ., դոցենտ Թ. Թադևոսյան

Հ. Սահակյան

Վանաձոր 2024թ.

Մանկավարժության բակալավրի մանկավարժական պրակտիկա

1. Պրակտիկայի նպատակը՝

1.1. ամրապնդել և խորացնել ուսումնական գործընթացի ժամանակ ուսանողների կողմից ձեռք բերված տեսական գիտելիքներն ու նեղ մասնագիտական կոմպետենցիաները,

1.2. ուսանողներին ծանոթացնելով հանրակրթական դպրոցի և ուսուցչի գործունեությանը՝ օգնել նրանց որոշելու համապատասխանություն ուսուցչին ներկայացվող մասնագիտական, մանկավարժական, մեթոդական, անձնային որակներին, հնարավորություն ընձեռել մասնագիտական-մանկավարժական ոլորտում գնահատելու սեփական ուժեղ և թույլ կողմերը, միջանձնային շփման, աշխատանքային միջավայրում հարմարվելու, խնդիրներ որոշելու ու դրանց լուծման ուղիներ գտնելու ունակությունները:

2. Պրակտիկայի խնդիրները՝

2.1. զարգացնել ուսանողների ինքնուրույն մտածելու, որոնողական, ստեղծագործական ունակությունները,

2.2. ուսանողներին ծանոթացնել մասնագիրական-մանկավարժական ժամանակակից մեթոդներին, զարգացնել դրանք ավանդական մեթոդների հետ համադրելու ունակություն,

2.3. ապահովել ուսումնական նախագծերի շրջանակներում ուսուցչի (դասղեկի) դերում տարվող աշխատանքների համար ուսումնական և մարդկային (աշակերտական) ռեսուրսների ինքնուրույն հավաքագրման, ընդհանրացման, կազմակերպման աշխատանքների հնարավորությունը:

3. Պրակտիկայի հաստատությունը**,** վայրը

Վանձոր քաղաքի՝ ՎՊՀ կողմից ընտրված հանրակրթական դպրոցներ / հանրակրթական դպրոցներ՝ ըստ ուսանողի բնակության վայրի (համապատասխան որոշման առկայության հիման վրա):

<u>Պրակտիկայի ընթացակարգը</u>

4-րդ կուրս, 7-րդ կիսամյակ, 4 շաբաթ, 4 կրեդիտ (առկա)

Հեռակա 5-րդ կուրս, 9-րդ և 10-րդ կիսամյակներ, 4 կրեդիտ

Պրակտիկայի ղեկավարը պարտավոր է.

- <u>Ա.</u> Ուսումնասիրել մանկավարժական պրակտիկայի ծրագիրը, նախանշել անելիքները:

- Պրակտիկան սկսվելուց երկու շաբաթ առաջ ուսումնասիրել պրակտիկայի անցկացման ծրագիրը, թեմատիկ պլանները, չափորոշիչը, պրակտիկային համապատասխանող ծրագրի բովանդակությունը:
- Մասնակցել մանկավարժական պրակտիկայի կոնֆերանսին, ուսանողներին ծանոթացնել պրակտիկայի ծրագրին, պրակտիկանտի պարտականություններին և իրավունքներին, օրագրի վարման կարգին:
- Լինել նշված դպրոցներում, ուղեկցել ուսանողներին, կազմակերպել ծանոթություն դպրոցի, ուսուցչական կոլեկտիվի, ուսուցիչ-ղեկավարի հետ:
- Լրացնել օրագրի «Պրակտիկայի նպատակը» էջի համապատասխան տողերը, օգնել պրակտիկանտին ներկայացնել պրակտիկայի անհատական պլանը օրագրի «Անհատական պլան» բաժնում:

- **Բ.** Նախապես կազմած օրացուցային պլանի համաձայն՝ իրականացնել հետևյալ աշխատանքները.
- Ուսանող-պրակտիկանտներին նախապատրաստել մանկավարժական գործունեությանը:
- Ռուսաց լեզվի և գրականության դասերի դասալսումների իրականացում հանրակրթական դպրոցում:
- Ռուսաց լեզվի և գրականության դասերի անցկացում հանրակրթական դպրոցում ըստ ուսպլանի:
- Հետևել պրակտիկանտի կողմից պրակտիկայի օրագրի՝ ժամանակին ու մեթոդապես ճիշտ վարմանը և պատասխանատվություն կրել դրա համար:
- Պրակտիկայի անցկացման վայրի աշխատակից ղեկավարի (հանրակրթական դպրոցի ուսուցչի) հետ միասին հետևել պրակտիկանտների հաճախումներին, ուսանողների բացակայության դեպքում տվյալները ներկայացնել դեկանատ և/կամ պրակտիկայի բաժին:
- Կազմել պրակտիկայի ծրագիր-պլան և յուրաքանչյուր շաբաթվա առաջին օրը հաստատել արձանագրությամբ:
- Քննարկել ուսանող-պրակտիկանտի կողմից իրականացված յուրաքանչյուր աշխատանքի՝ դասավանդման, միջոցառման քննարկում, նշելով դրական կողմերը, նկատված թերությունները:
- Մասնակցել մյուս ղեկարվար(ներ)ի կազմակերպած քննարկումներին:
- Պրակտիկայի նախապատրաստական փուլում՝
  - ուսանողներին ծանոթացնել մանկավարժական պրակտիկայի անցկացման մեթոդիկային,
  - ուսանողներին ծանոթացնել պրակտիկայի ծրագրին ու համապատասխան մասնագիտական գրականությանը,
  -կազմել ժամանակացույց և վերջինիս համաձայն՝ կազմակերպել աշխատանքը և այն վերլուծել ու քննարկել ուսանողների հետ:
- Պրակտիկայի ընթացքում՝
  - ղեկավարել ուսանողների աշխատանքը և քննարկել այն ուսանողների հետ՝ վեր հանելով թերություններն ու դրական կողմերը:

  Պրակտիկայի ավարտից հետո՝
  - Պրակտիկայի ավարտին օրագրում բնութագրել պրակտիկանտի կատարած աշխատանքը, գնահատել նրան:
  -Ներկայացնել պրակտիայի ծրագրով պահանջվող փաստաթղթերը պատշաճ վիճակով:

- Գնահատել ուսանողի կատարած աշխատանքը ռուսաց լեզվի և գրականության դասավանդման ուղղությամբ, որտեղ արտահայտված կլինի ուսանողի ձեռք բերած կարողությունների և հմտությունների ձևավորման պատկերը,
-Ընդհանրացնել ուսանողների կատարած աշխատանքը մանկավարժական գործունեության շրջանակներում:
- Մասնակցել պրակտիկայի պաշտպանությանը, պրակտիկանտի վերջնական գնահատականի ձևավորմանը:

4. Պրակտիկայի հաշվետու փաստաթղթերը

Բոլոր տեսակի մանկավարժական պրակտիկաների համար նախատեսված է օրագիր: Որպես պրակտիկայի հաշվետու փաստաթուղթ ներկայացվում է նաև ուսանողի կողմից անցկացված 1 դասի պլանի կոնսպեկտ, ուսանողի՝ որպես դասղեկի օգնականի անցկացրած 1 միջոցառման կոնսպեկտ, աշակերտի անձնավորության կամ դասարանական կոլեկտիվի հոգեբանական բնութագիրը:

5. Պրակտիկայի գնահատումը

Պրակտիկայի ղեկավարը պարտավոր է՝
- պրակտիկայի ավարտին օրագրում բնութագրել պրակտիկանտի կատարած աշխատանքը, գնահատել այն,
-պրակտիկայի բաժին ներկայացնել բոլոր ուսանողների՝ պրակտիկայի ծրագրով պահանջվող փաստաթղթերը պատշաճ վիճակով,
-մասնակցել պրակտիկայի պաշտպանությանը, պրակտիկանտների վերջնական գնահատականի ձևավորմանը,
-բազմագործոնային համակարգով ներկայացնել առավելագույնը 100 միավորի բաղադրիչները, գնահատման կարգը, ամփոփման կարգն ու ժամկետները, որոնք հիմնված են ՎՊՀ «Պրակտիկայի կանոնակարգի» վրա:

Պրակտիկայի գնահատման բաղադրիչները և հատկացվող միավորները (գնահատականը ըստ 100 միավորանոց սանդղակի)

Գնահատման բաղադրիչները	Հատկացվող միավորը	Գնահատում	
1. Հաճախում	0 - 10		
2. Առարկայի իմացություն	0 - 20		

3. Վարած դասերի վերլուծություն • Կիրառված մեթոդների արդյունավետություն • Նորագույն տեխնոլգիաների կիրառում ` a. համակարգչային տեխնոլոգիայի կիրառում b. այլ տեխնոլոգիաների կիրառում • դասաժամանակի ճիշտ օգտագործում • գնահատում	0 - 7 0-3 0-1 0-3 0-6		
4. Մանկավարժական աշխատանք • արտադասարանային աշխատանքի կազմակերպման կարողություն • դասղեկի ժամի անցկացում, աշխատանք աշակերտական խորհրդի հետ • մանկավարժական հաղորդակցման մշակույթ	0 - 5 0 - 5 0 - 5		
5. Հոգեբանախորհրդատվական աշխատանք • աշակերտի կամ դասարանի կոլեկտիվի հոգեբանական բնութագրի կազմում • դասի հոգեբանամանկավարժական վերլուծության անցկացում • արտադասարանային միջոցառման հոգեբանական հիմնավորում	0 - 5 0 - 5 0 - 5		
Պրակտիկայի պաշտպանություն	0 - 20		
Ընդհանուր միավորը	100		

Պրակտիկան գնահատվում է՝ ըստ սահմանված չափանիշների՝ բազմագործոնային համակարգով՝ պրակտիկայի ընթացքում ձեռք բերված կարողությունների, հմտությունների, կոմպետենցիաների հիման վրա:

Մասնակցության աստիճանը %	Հատկացվող միավորը
96-100/ 20 ûñ	10
91-95/ 19 ûñ	8
86-90/ 18 ûñ	6
81-85/ 17 ûñ	4
76-80/ 16 ûñ	2
0-75/ 15 ûñ	0

6. Պրակտիկայի չափորոշիչ

Ուսանող-պրակտիկանտը պետք է ներկայացնի իր կողմից իրականացված աշխատանքների ժամանակացույցը, կարողանա լրացնել օրագիրը:

7. Պրակտիկայի բովանդակությունը

Առաջին շաբաթ – մանկավարժական պասիվ պրակտիկա: Դասալսումներ ըստ ուսուցիչ-ղեկավարի դասացուցակի:

Երկրորդ շաբաթ – ռուսաց լեզվի և գրականության դասերի պլանների կազմում, դասերի անցկացում ուսանող-պրակտիկանտի կողմիվունից (Նվազագույնը 2 դաս): Դասալսումներ այլ ուսանող-պրակտիկանտներին կցվաց դասարաններում: Անցկացված դասերի քննարկում ուսուցիչ ղեկավարի և պրակտիկայի մեթոդիստների հետ: Ուսուցչի մասնագիտական-մանկավարժական գործունեության այլ բաղադրիչների կատարում (ըստ առարկայի ուսուցչի պլանի):

Երրորդ շաբաթ – ռուսաց լեզվի և գրականության դասերի պլանների կազմում, դասերի անցկացում ուսանող-պրակտիկանտի կողմիվունից (Նվազագույնը 2 դաս): Դասալսումներ այլ ուսանող-պրակտիկանտներին կցվաց դասարաններում: Անցկացված դասերի քննարկում ուսուցիչ ղեկավարի և պրակտիկայի մեթոդիստների հետ: Ուսուցչի մասնագիտական-մանկավարժական գործունեության այլ բաղադրիչների կատարում (ըստ առարկայի ուսուցչի պլանի):

Չորրորդ շաբաթ – ռուսաց լեզվի և գրականության դասերի պլանների կազմում, դասերի անցկացում ուսանող-պրակտիկանտի կողմիվունից (Նվազագույնը 2 դաս): Դասալսումներ այլ ուսանող-պրակտիկանտներին կցվաց դասարաններում: Անցկացված դասերի քննարկում ուսուցիչ ղեկավարի և պրակտիկայի մեթոդիստների հետ: Ուսուցչի մասնագիտական-մանկավարժական գործունեության այլ բաղադրիչների կատարում (ըստ առարկայի ուսուցչի պլանի): Պրակտիկայի օրագրի վերջնական ամփոփում, անհրաժեշտ փաստաթղթերի լրացում:

Ուսանող պրակտիկանտը պարտավոր է ունենալ պրակտիկայից դուրս միջոցառումների անցկացման անհատական պլան-ժամանակացույց:

Պրակտիկայի պաշտպանությանը մասնակցում են պրակտիկայի ղեկավարը, ֆակուլտետի դեկանը, ամբիոնի վարիչը:

Կոմպետենցիաների ցանկ, որոնք «Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտությամբ մանկավարժության բակալավրի որակավորում ունեցող ուսանողը ձեռք կբերի մանկավարժական պրակտիկայի արդյունքում՝ սահմանված 023102.02.7 «Ռուսաց լեզու և գրականություն» ԿԾ-ով

ա)Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)
- վերլուծության և համադրության կարողություն **(**ԳԿ **-1)**,
- տեղեկույթը կառավարելու հմտություն (տեղեկույթի ձեռք բերում, համակարգում, վերլուծում) **(**ԳԿ **- 7)**,
- խնդիրներ լուծելու կարողություն **(**ԳԿ **- 8)**,
- որոշումներ կայացնելու կարողություն **(**ԳԿ **- 9)**:

բ)Միջանձնային կոմպետենցիաներ (ՄՁԿ)
-միջանձնային գործնական հմտություններ **(**ՄՁԿ **- 2),**
-թիմային աշխատանքի կարողություն **(**ՄՁԿ **- 3)**:

գ)Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)
-գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն (ՀԳԿ-1),
-հետազոտական կարողություն (ՀԳԿ-2),
-նոր իրավիճակներին հարմարվելու կարողություն (ՀԳԿ-4),
-ինքնուրույն աշխատելու կարողություն (ՀԳԿ-5),
-որակը վերահսկելու կարողություն (ՀԳԿ-6):

դ)Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ԱԿ)
-սոցիալական կարևորություն ունեցող խնդիրների և գործընթացների գիտական վերլուծության, մասնագիտական գործունեության ընթացքում ծագած խնդիրների գիտական էության բացահայտման ունակություն, ինչպես նաև մասնագիտական և սոցիալական գործունեության տարբեր ոլորտներում հումանիտար, սոցիալական ր տնտեսական գիտությունների մեթոդների գործնականում կիրառելու ունակություն (ԱԿ-1),
-տրամաբանական մտածողության օրենքների օգտագործման ունակություն (ԱԿ-2),
-գիտական նոր գիտելիքների ձեռքբերման ունակություն (ԱԿ-3),
-մասնագիտական գործունեության մեջ հիմնական մեթոդները օգտագործելու, գիտության մեջ մոդելավորման, տեսական և գիտափորձնական հետազոտության մեթոդները կիրառելու պատրաստվածություն (ԱԿ-4),
_տրված առարկային բնորոշ մեթոդների կիրառում(ԱԿ-6):

2023-2024 ուստարվա մանկավարժական պրակտիկայի ժամանակացույց

Պրակտիկայի փուլը	Կատարվելիք աշխատանքը	Պրակտիկայի վայրը	Անցկացման օրը	Պատասխանատու
1-ին շաբաթ 09.02-16.02				
Նախապատրաստական փուլ	Ծանոթացում մանկավարժական պրակտիկայի բովանդակությանը, ծրագրին, ժամաքանակին, պրակտիկայի իրականացման վայրին, փաստաթղթերին:	Վանաձորի 1ին դպրոց		Ղեկավարներ (Հովհաննիսյան Գ., Սահակյան Հ.)
Պրակտիկայի մեկնարկ հանրակրթական դպրոցում	Ծանոթացում դպրոցի կառուցվածքին, գործունեությանը, դասացուցակին, ժամատախտակին: Ծանոթություն դպրոցի, տնօրենի, ուսուցչական կոլեկտիվի, ղեկավար-ուսուցչի հետ:	Վանաձորի 1ին դպրոց		ղեկավարներ
Փաստաթղթերի, ծրագրերի հետ ծանոթացման փուլ	Ծանոթացում կրթադաստիարակչական աշխատանքնորի պլանի, մատենավարման կարգի, առարկայական ծրագրերի, դասագրքերի, դասարանների ու աշակերտական կոլեկտիվների հետ:	Վանաձորի 1ին դպրոց		ղեկավարներ
Պասիվ պրակտիկայի՝ դասալսումների փուլ	պրակտիկանտի անհատական պլանի կազմում, դասաբաշխում:			
2րդ շաբաթ 19.02-23.02				

Պրակտիկայի անցկացման ակտիվ փուլ	Դասերի պլան-կոնսպեկտների կազմում ու հաստատում: Փոխադարձ դասալսումներ, քննարկումներ: Ներգրավվածություն ուսուցչի ծանրաբեռնվածությամբ նախատեսված այլ աշխատանքներում:	Վանաձորի 1ին դպրոց		Ղեկավարներ (Հովհաննիսյան Գ., Սահակյան Հ.)
Կազմակերպչական, մեթոդական աշխատանքներ	Պրակտիկայի օրագրի կանոնավոր վարման ստուգում	Վանաձորի 1ին դպրոց		Ղեկավարներ (Հովհաննիսյան Գ., Սահակյան Հ.)
3-րդ շաբաթ 26.02-01.03				
Պրակտիկայի անցկացման ակտիվ փուլ	Դասերի պլան-կոնսպեկտների կազմում ու հաստատում: ռուսաց լեզու և գրականության դասերի անցկացում տարբեր դասարաններում: Փոխադարձ դասալսումներ, քննարկումներ:	Վանաձորի 1ին դպրոց		Ղեկավարներ (Հովհաննիսյան Գ., Սահակյան Հ.)
մանկավարժական (դասղեկական) աշխատանքների նախապատրաստում և անցկացում	դասղեկական ժամ / դաստիարակչական բնույթի այլ միջոցառման նախապատրաստական և վարման աշխատանքների կատարում:	Վանաձորի 1ին դպրոց		Ղեկավարներ (Հովհաննիսյան Գ., Սահակյան Հ.)
4-րդ շաբաթ 04.03-07.03				
Պրակտիկայի անցկացման ակտիվ փուլ	Դասերի պլան-կոնսպեկտների կազմում ու հաստատում: ռուսաց լեզու և գրականության	Վանաձորի 1ին դպրոց		Ղեկավարներ (Հովհաննիսյան Գ., Սահակյան Հ.)

	դասերի անցկացում տարբեր դասարաններում: Փոխադարձ դասալսումներ, քննարկումներ:			
Կազմակերպչական աշխատանքներ	արտադասարանական միջոցառումների կազմակերպման և անցկացմանն աջակցող աշխատանքներ՝ համաձայն ուսուցչի պլանի:			
Ամփոփում, վերլուծություն	Պրակտիկայի հաշվետու փաստաթղթերի հավաքում, համակարգում:	Վանաձորի 1ին դպրոց		Ղեկավարներ (Հովհաննիսյան Գ., Սահակյան Հ.)
Պրակտիկայի պաշտպանություն	Վանաձոր, ՎՊՀ			ղեկավարներ, դեկան, ամբիոնի վարիչ